

**5.4. Արտադրական դժբախտ պատահարները 2006 թվականին**

Ըստ հանրապետության կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2006թ. 94 արտադրական դժբախտ պատահարների հետևանքով 100 մարդ ստացել է տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ և մեկ ու ավելի օրով դարձել անաշխատունակ: 1000 աշխատողի հաշվով (նրանց թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.9:

**Արտադրական դժբախտ պատահարների դեպքերի և տուժածների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, 2006թ.**

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		Նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.երևան	22	24	3	6	1
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	9	9	-	1	-
Արմավիր	1	1	-	1	-
Գեղարքունիք	1	1	-	1	-
Լոռի	4	8	-	1	-
Կոտայք	6	6	1	-	-
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	50	50	2	6	-
Վայոց ձոր	1	1	-	1	-
Տավուշ	-	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>94</b>	<b>100</b>	<b>6</b>	<b>17</b>	<b>1</b>

Դժբախտ պատահարների հետևանքով 2 մարդ դարձել է I, մեկը՝ II խմբի հաշմանդամ: Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է 2006թ., անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 3.0 հազ. մարդ-օր: 1 և ավելի աշխատանքային օրով հիմնական աշխատանքից այլ աշխատանքի է փոխադրվել աշխատունակությունը մասամբ կորցրած 3 մարդ:

Հանրապետությունում դժբախտ պատահարներից 2-ը տեղի է ունեցել աշխատանքի գնալու ճանապարհին, իսկ 2-ն՝ աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին, որի արդյունքում տուժել են, համապատասխանաբար՝ 2-ական մարդ: Չորս դեպքն էլ գրանցվել է ՀՀ Արարատի մարզում:

2006թ. հանրապետությունում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, որոնք տրվում են տուժողին կամ տուժողի մահվան դեպքում դրա իրավունքն ունեցող անձանց, կազմել են 381.3 մլն. դրամ, որոնցից՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստներ՝ 210.2 մլն. դրամ, կորցրած աշխատավարձի փոխհատուցումներ՝ 53.2 մլն. դրամ, միանվագ նպաստներ՝ 17.2 մլն. դրամ, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր՝ 6.3 մլն. դրամ: Դժբախտ պատահարների հետևանքով շարքից դուրս եկած սարքավորումների, գործիքների, քանդված շենքերի, շինությունների նյութական վնասը կազմել է 126.7 մլն. դրամ:

Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը կազմել է 863.7 մլն. դրամ, որից հատուկ արտահագուստի ձեռք բերման համար՝ 486.8 մլն. դրամ, անհատական պաշտպանության միջոցառումների վրա՝ 179.2 մլն. դրամ: